



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ**

<< 04 >> << սեպտեմբերի >> 2017թ.
ք. Եղեգնաձոր

N 100

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ <<ՄԱԼԻՇԿԱՅԻ ԱԱՊԿ>>
ՊՈԱԿ-ՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԻԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 5-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջներով.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ ԵՄ՝

1. 2017 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Մալիշկայի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ում անցկացնել 2016 թ.-ի բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ << Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Վասակ Կարապետյանի և գլխավոր մասնագետ Խիկար Խաչատրյանի կողմից:

2. Խմբի աշխատանքներին մասնակից դարձնել վերոհիշյալ ՊՈԱԿ-ի տնօրենին և հաշվապահին:

3. Աուդիտի անցկացման ժամկետը սահմանել 5 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2017 թվականի սեպտեմբերի 5-ին, ավարտել 2017 թվականի սեպտեմբերի 11-ին:



Հ. ՍԱՐԳՍՅԱՆ